ՀՀ էկոնոմիկայի նախարարին՝
Պարոն **Գևորգ Պապոյանին**
կից հասարակական խորհրդի
նախագահին

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Պապոյան,

Ես՝ **Հասմիկ Բարխուդարյանս**, «**Արիես Քեյթրինգ Սերվիս**» (ՀՎՀՀ 00079228) և «**Արիես Լանչ**» (ՀՎՀՀ 00093371) ընկերությունների հիմնադիրն եմ: Մոտ երեք տասնամյակ շարունակ գործունեություն եմ ծավալում հանրային սննդի ոլորտում, ինչպես նաև ներգրավվելով ոլորտի համակարգային բարեփոխումների և որակի բարձրացման նախաձեռնություններում:

Վերջերս ընտրվել եմ «**Ռեստորանատերերի շահերի և իրավունքների պաշտպանության միություն**» (ՀՎՀՀ 08309292) հասարակական կազմակերպության **Նախագահ**, որի նպատակն է ապահովել ռեստորանատերերի շահերի պաշտպանությունը, ոլորտի մրցակցային զարգացմանը նպաստելը և պետություն-բիզնես համագործակցության արդյունավետ մոդել ձևավորելը:

Հաշվի առնելով իմ երկարամյա մասնագիտական փորձը և ոլորտային ներգրավվածությունը՝ հայտնում եմ պատրաստակամությունս մասնակցելու ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի աշխատանքներին՝ որպես հանրային սննդի և սպասարկման ոլորտի քաղաքացիական հասարակության ֆիզիկական ներկայացուցիչ: Համոզված եմ, որ կկարողանամ իմ ներդրումն ունենալ ոլորտային քաղաքականությունների ձևավորման և մասնակցային կառավարման զարգացման գործում:

Իմ մասնագիտական գործունեության ընթացքում մշտապես եղել եմ ոլորտում ակտիվ և ներգրավված անձ: Եղել եմ **ՓՄՁ խորհրդի անդամ**, ինչպես նաև **«Մադամ Ակումբի» խորհրդի անդամ**: Տարիների ընթացքում ունեցել եմ բազմաթիվ հանդիպումներ և քննարկումներ տարբեր պետական ինստիտուտների հետ՝ կապված **զնումների ընթացակարգերի, հարկային քաղաքականության, ոլորտային բարեփոխումների և պետություն–մասնավոր հատված համագործակցության** ուղղություններով:

Ներկայումս ակտիվորեն համագործակցում եմ **Երևանի քաղաքապետարանի** հետ՝ նպաստելով հանրային սննդի ոլորտում կանոնակարգումների կատարելագործմանը և գործարար միջավայրի բարելավմանը:

Խնդրում եմ դիտարկել իմ թեկնածությունը հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակով:

Հարգանքով՝
Հասմիկ Բարխուդարյան

«Արիես Քեյթրինգ Սերվիս» ՍՊԸ
«Արիես Լանչ» ՍՊԸ
Հիմնադիր
«Ռեստորանատերերի շահերի
և իրավունքների պաշտպանության միություն» ՀԿ
Նախագահ

Հաշվառման հասցե՝ ք. Երևան, Արաբկիր ՎՏ, Հրաչյա Քոչարի 9, բն. 4
Հեռ.՝ +37455227689
Էլ. փոստ՝ Hasmik.mikhailovna@gmail.com

Կից ներկայացվում են՝

1. Ընկերությունների պետական գրանցման վկայականի կամ ռեգիստրի քաղվածքի պատճեն
2. Կանոնադրությունների պատճեն
3. Անձնագրիս պատճեն և հաշվառման հասցեն
4. Կոնտակտային տվյալներ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ռեստորանատերերի շահերի և իրավունքների պաշտպանության միություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ռեստորանային բիզնես իրականացնող իրավաբանական անձանց և/ կամ 18 տարին լրացած ֆիզիկական անձանց կամավոր միավորում:

2. Կազմակերպության գործունեության հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները՝ օրինականություն, խտրականության բացառում, բարեխղճություն, անդամակցության կամավորություն, անդամների շահերի ընդհանրություն, ինքնակառավարում և հաշվետվողականություն:

3. Կազմակերպությունը գործունեություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում՝ համապատասխանելով տվյալ պետությունների օրենսդրությանը:

4. Կազմակերպության անվանումն է՝

- Հայերեն լրիվ անվանումը՝ «Ռեստորանատերերի շահերի և իրավունքների պաշտպանության միություն» հասարակական կազմակերպություն
- Ռուսերեն լրիվ անվանումը՝ «Союз по защите интересов и прав рестораторов» Общественная Организация
- Անգլերեն լրիվ անվանումը՝ “Union for the Protection of Restaurateurs’ Interests and Rights” Non-Governmental Orgaaнization

5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստան, Երևան, Վիկտոր Համբարձումյան փողոց, շենք 75, բնակարան 22: Հեռախոս՝ +374 55 227689, +374 43 387058, Էլ. փոստ՝ restaurateurs.council@gmail.com

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

6. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

1) Կազմակերպության և դրա անդամների շահերի ու իրավունքների ներկայացումն ու պաշտպանությունը՝ տեղական և միջազգային հարթակներում:
2) Ռեստորանային և հյուրընկալության ոլորտի պետական քաղաքականության մշակմանն ու իրագործմանը մասնակցությունն ու աջակցությունը:
3) Պետություն-մասնավոր հատված համագործակցության խթանումը՝ արդյունավետ երկխոսության և համատեղ նախաձեռնությունների միջոցով:
4) Համագործակցություն շահագրգիռ պետական, հասարակական, մասնավոր և միջազգային կառույցների հետ:
5) Ռեստորանային ոլորտի կառուցվածքային և բովանդակային զարգացման խթանումը՝ ներառյալ կրթական, տեխնոլոգիական և ինովացիոն լուծումների կիրառումը:
6) Ոլորտում առկա խնդիրների բացահայտումն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը համապատասխան պետական մարմիններին:
7) Մարդկային ռեսուրսների զարգացմանն աջակցությունը՝ մասնագիտական վերապատրաստման ծրագրերի, փորձի փոխանակման և կրթական համագործակցությունների միջոցով:
8) Հայկական խոհանոցի և գաստրոնոմիկ ժառանգության ճանաչելիության բարձրացումը՝ որպես ազգային հպարտության և զբոսաշրջային գրավչության կարևոր բաղադրիչ:

9) Զբոսաշրջային նոր և եզակի ռեստորանային առաջարկների մշակմանն ու տարածմանը նպաստելը:
10) Ռեստորանային ոլորտի արդյունքների և ծառայությունների որակի բարելավմանն ուղղված նախաձեռնությունների իրականացումը:
11) Հայկական սննդի ոլորտի և խոհանոցի խթանումը՝ տեղական և միջազգային հարթակներում՝ ցուցահանդեսների, փառատոների, գործարար հանդիպումների, ինչպես նաև առցանց և այլ գործիքակազմերի միջոցով:
12) Մարքեթինգային և հանրային կապերի (PR) ժամանակակից գործիքների օգտագործումը՝ անդամ ռեստորանների ճանաչելիությունն ու հեղինակությունը բարձրացնելու նպատակով:
13) Անդամ կազմակերպությունների արտահանման ներուժի ուսումնասիրությունն ու նրանց միջազգային շուկա մուտք գործելու աջակցությունը:
14) Շուկայական միտումների, սպառողական վարքագծի և ոլորտային մարտահրավերների վերաբերյալ հետազոտությունների և վերլուծությունների իրականացումը:
15) Մասնագիտական վերապատրաստումների, սեմինարների և աշխատանքային խմբերի կազմակերպում՝ ոլորտի շարունակական զարգացումն ապահովելու նպատակով:
16) Շրջակա միջավայրի պահպանության և սննդի անվտանգության միջազգային չափանիշներին համահունչ գործունեության խրախուսումը:
17) Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպության համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների հետ:
18) Իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան՝ ձեռնարկատիրական գործունեության իրականացում, իր գույքն ու գործունեության արդյունքները տնօրինում, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով առևտրային կազմակերպությունների ստեղծում և գոյություն ունեցող կազմակերպությունների մեջ մասնակցություն:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

7. Կազմակերպության անդամ կարող է դառնալ ցանկացած հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող 18 տարին լրացած ֆիզիկական և/կամ իրավաբանական անձ, որը գրանցված է Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում, ընդունում է Կազմակերպության արժեքներն ու կանոնադրությամբ սահմանված նպատակները և պատրաստ է ակտիվորեն ներգրավվել Կազմակերպության գործունեությանը:
8. Անդամակցելու համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձը ներկայացնում է գրավոր դիմում՝ հասցեագրված Կազմակերպության Նախագահին: Դիմումում պետք է նշվեն շահագրգռվածությունը, ռեսուրսային մասնակցության պատրաստակամությունը և Կազմակերպության արժեքների նկատմամբ հանձնառությունը:
9. Անդամակցության դիմումների քննարկումն ու որոշման ընդունումը կատարվում է Կազմակերպության Նախագահի կողմից:
10. Կազմակերպության անդամի հեռացման մասին որոշումը ընդունվում է Ժողովի կողմից: Հեռացման հիմքեր կարող են հանդիսանալ՝
    - անդամավճարների կրկնվող չվճարում,
    - կանոնադրության պահանջների խախտում,

- կազմակերպության հեղինակությունը վարկաբեկող գործողություններ,
- վարքագծի կանոնակարգի կոպիտ խախտում և այլ նմանատիպ դեպքեր:

11. Կազմակերպության անդամների վարքագծի կանոնակարգը հաստատվում է Ժողովի կողմից:
12. Կազմակերպության անդամների համար սահմանվում է պարտադիր ամսական անդամավճար, որի չափը, վճարման ժամկետներն ու կարգը սահմանվում են Կազմակերպության Ժողովի կողմից՝ հաշվի առնելով տվյալ անդամի գործունեության ծավալը և ներգրավվածության մակարդակը:
13. Անդամներին կարող են տրամադրվել մուտքի իրավունքներ նաև թվային հարթակներում (օրինակ՝ փակ ինտերնետային պորտալ, միայն անդամների համար նախատեսված բջջային հավելված, Slack/Teams և այլ թվային ալիքներ)՝ շարունակական կապի ապահովման, նյութերի փոխանակման, առցանց քվեարկությունների և վերապատրաստումների մասնակցության նպատակով:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14.Անդամի իրավունքներն են՝

1) Ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում:
2) Անձամբ կամ Լիազոր ներկայացուցչի միջոցով մասնակցել Կազմակերպության Ժողովին :
3) Օգտվել Կազմակերպության կողմից տրամադրվող խորհրդատվական, տեղեկատվական և մեդիացիոն ծառայություններից:
4) Ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,ը:
5) Վերադասության կարգով կամ դատարանի միջոցով բողոքարկել Կազմակերպության կառավարման մարմինների որոշումները:
6) Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, Կազմակերպության մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին 3 տարիներին,Մասնակցել թվային միջավայրում կազմակերպվող քվեարկություններին, ֆորումներին, քննարկումներին և հետադարձ կապի մեխանիզմներին:
7) Իրացնել բոլոր այն իրավունքները, որոնք սահմանված են Կազմակերպության կանոնադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
8) Գովազդի, բովանդակության կամ տեղեկատվության տեղադրում Կազմակերպության պաշտոնական կայքում և սոցիալական հարթակներում:
9) Մասնակցություն ոլորտային ցուցահանդեսներին, միջազգային և տեղական միջոցառումներին, համաժողովներին և գործընկերային հանդիպումներին՝ անվճար կամ նվազեցված վճարներով:
10) Նախապատվություն և հատուկ իրավունք՝ մասնակցելու Կազմակերպության կազմակերպած մարքեթինգային արշավներին և արտասահմանյան ներկայացումներին (ստենդեր, ցուցադրություններ, համագործակցային փաթեթներ):
11) Ներառվածություն «Ռեստորանատերերի շահերի և իրավունքների պաշտպանության միություն» բրենդավորված հանրային քարոզչական նախաձեռնությունների մեջ՝ որպես գործող անդամ:

12) Ստանալ Կազմակերպության կողմից տրամադրվող հատուկ վիզուալ ճանաչման միջոցներ, այդ թվում՝

- Էմբլեմներ, վկայականներ, «Կազմակերպության անդամ» ցուցանակներ և այլն,
- Բրենդավորված պիտակներ, որոնք կարող են տեղադրվել ռեստորանների մուտքերում, ինտերիերում կամ մենյուում,
- Թվային նշաններ (օրինակ՝ QR կոդեր)՝ տեսանելի Կազմակերպության պաշտոնական կայքում, գործընկերային քարտեզներում և միջազգային զբոսաշրջային հարթակներում (օրինակ՝ *TripAdvisor*, *Google Maps*, *Booking*),
- Մասնակցություն «Ռեստորանատերերի շահերի և իրավունքների պաշտպանության միություն» նշանաբանով ստեղծված քարոզչական նյութերում (վիդեոներ, հոդվածներ, գրքույկներ):

15. Անդամի պարտականություններն են՝

1) Պահպանել Կազմակերպության կանոնադրությունը և կառավարման մարմինների որոշումները:
2) Բարեխղճորեն և ժամանակին կատարել իր վրա դրված պարտականությունները:
3) Վճարել սահմանված անդամավճարը:
4) Չհրապարակել Կազմակերպության ներքին և գաղտնի տեղեկատվությունը՝ առանց գրավոր թույլտվության՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:
5) Իր գործունեության ընթացքում պահպանել ՀՀ օրենսդրության, Կազմակերպության կանոնադրության և Վարքագծի կանոնակարգի պահանջները:
6) Պահպանել և բարձրացնել Կազմակերպության հեղինակությունն ու վարկանիշը՝ ինչպես հանրային, այնպես էլ մասնագիտական հարթակներում:
7) Կազմակերպությանը տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր կամ տեղեկատվություն՝ մասնագիտական աջակցության և վերլուծական աշխատանքների նպատակով:
8) Ակտիվ մասնակցել Կազմակերպության քննարկումներին, նախաձեռնություններին և զարգացման ռազմավարության մշակման ու բարելավման գործընթացներին՝ ինչպես առկա, այնպես էլ հեռավար եղանակով (այդ թվում՝ Zoom/Webex/Telemost/Google meet հարթակներում՝ առցանց քննարկումների կամ հարցումների միջոցով):
9) Պատասխանատվություն կրել Կազմակերպության տրամադրած վիզուալ նյութերի որակի, հավաստիության և կիրառման պայմանների համար: Վիզուալ ռեսուրսները ենթակա են տարեկան վերահաստատման Կազմակերպության կողմից: Դրանց վնասման դեպքում վերականգնման ծախսերը կրում է վնաս պատճառած անդամը:
10) Կազմակերպության կանոնադրության խախտման, պարտականությունների չկատարման կամ անդամավճարի չվճարման դեպքում, Գործադիր Տնօրենը/Նախագահը կարող է կազմակերպության Խորհրդին խնդրել կիրառել կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ նկատողություն, խիստ նկատողություն կամ անդամության ժամանակավոր կասեցում:
11) Պահպանել էթիկայի նորմերը՝ սահմանված Կազմակերպության կանոնադրությամբ և այլ ներքին ընթացակարգերով:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Կազմակերպության կառավարման մարմիններն են ժողովը և գործադիր մարմինը՝ Նախագահը:

17. Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:

18. Կազմակերպության հերթական ժողովը գումարվում է հինգ տարին մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է Նախագահը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Նախագահը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 20 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և կառույցներին:

19. Կազմակերպության արտահերթ Ժողով հրավիրվում է Նախագահի կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Նախագահի կողմից:

20. Կազմակերպության արտահերթ Ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ Ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:

21. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

1) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,

2) այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը,

3) Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,

4) Կազմակերպության կառուցվածքի հաստատումը,

5) Կազմակերպության Նախագահի ընտրությունը և փոփոխումը,

6) Կազմակերպության Նախագահի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը,

7) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,

8) Կազմակերպության ռազմավարության հաստատումը, եթե Կազմակերպությունը նախատեսում է ունենալ ռազմավարություն,

9) հինգ տարին մեկ անգամ գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը,

10) Կազմակերպության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,

11) Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

12) Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը,

13) Սահմանում է անդամավճարների չափը և գանձման կարգը,

14) օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

22. Ժողովն իրավազոր է, եթե գումարվել է օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, և Ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի որոշումներն ընդունվում են Կազմակերպության Ժողովին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են

ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները և հաշվետվությունները պահպանվում են 5 տարի:

23. Նախագահն ընտրվում է Ժողովի կողմից հինգ տարի ժամկետով: Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության նախագահն է: Նախագահը ղեկավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը և վարում է ժողովի նիստերը:

24. Նախագահի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

25. Նախագահը Կազմակերպության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխան՝

1) ապահովում է Ժողովի որոշումների կատարումը,

2) տնօրինում և կառավարում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

3) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

4) տալիս է լիազորագրեր,

5) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

7) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,

8) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

9) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,

10) հաստատում է Ժողովների գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք հինգ տարին մեկ անգամ ներկայացնում է Ժողովի հաստատմանը,

11) ընդունում է Կազմակերպության անդամ և հեռացնում Կազմակերպության անդամությունից,

12) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

26. Նախագահն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

27. Նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

28. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

29. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

30. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) Կազմակերպության անդամների ներդրումները, անդամավճարները,

2) Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

3) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները,

4) դրամական մուտքերը պետական բյուջեից,

5) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,

6) հանգանակությունները,

7) օրենքով չարգելած այլ միջոցներ:

31. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար: Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի կարող բաշխվել:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

32. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:

33. Ժողովը կազմավորում (նշանակում) է լուծարման հանձնաժողով (լուծարող) և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

34. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կանոնադրությունը կազմված է __._____. 202 թ. և բաղկացած է _____ թերթից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2025-10-22

«ՌԵՍՏՈՐԱՆԱՏԵՐԵՐԻ ՇԱՀԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Գրանցման համար	211.171.1486658
Հիմնադրման տարի	2025
Գրանցման ամսաթիվ	2025-10-22
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	55740804
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	08309292
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	0176658
Էլ. փոստ	restaurateurs.council@gmail.com
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Փ. / Շ / 75 / 22 ԲՆ. ԱՐԱԲԿԻՐ 0033 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	+374 55 227689

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն Ազգանուն	ՀԱՍՄԻԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ՄԻԽԱԻԼԻ
Անձնագրային տվյալներ	011956539 2020-08-24 004
Հասցե	ՀՐ. ՔՈՉԱՐԻ Փ. / Շ / 9 / 4 ԲՆ. ԱՐԱԲԿԻՐ 0012 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Scanned by AnyScanner

Տպագրված է ընդամենը 4 (չորս) օրինակ

Օրինակ_1___

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՌԵՍՏՈՐԱՆԱՏԵՐԵՐԻ ՇԱՀԵՐԻ և ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2025թ-ի սեպտեմբերի 8 -ի

հիմնադիր ժողովի որոշմամբ

Նախագահ՝

Հասմիկ Բարխուդարյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«22» 10 2025 թ.

Գրանցման համար 211.171.1486658

Հարկ վճարողի հաշվառման համար 08309292

ստորագրությունից

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՌԵՍՏՈՐԱՆԱՏԵՐԵՐԻ ՇԱՀԵՐԻ և ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2025 թ.

Scanned by AnyScanner

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2020-05-25

«ԱՐԻԵՍ ԼԱՆՉ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար	264.110.07470
Հիմնադրման տարի	2006
Գրանցման ամսաթիվ	2006-04-10
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	39178530
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	00093371
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	45117470
Էլ. փոստ	-
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	ԲԱԲԱՅԱՆ / 14 / 8 ԱՐԱԲԿԻՐ 0014 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	–

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	Տնօրեն
Անուն Ազգանուն	ՀԱՍՄԻԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ՄԻԽԱԻԼԻ
Անձնագրային տվյալներ	000854570 2012-12-14 001
Հասցե	ՀՐ. ՔՈՉԱՐԻ Փ. / Շ / 9 / 4 ԲՆ. ԱՐԱԲԿԻՐ 0012 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ըստ 2020-05-25
«ԱՐԻԵՎ ԼԱՆՉ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ **50,000**

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով	
ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ Անձնագիր հ/հ AK0542932 տրվ. 004 ի կողմից Հասցե՝ ԲԱԲԱՅԱՆ Փ. / Շ / 14 / 8 ԱՐԱԲԿԻՐ 0014 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2006-04-10	25 %	12,500	
ՀԱՍՄԻԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Անձնագիր հ/հ AK0498013 տրվ. 004 ի կողմից Հասցե՝ ՀՐ. ՔՈՉԱՐԻ Փ. / Շ / 9 / 4 ԱՐԱԲԿԻՐ 0033 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2013-09-30	75 %	37,500	

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2008-12-26	**Մասնակիցների փոփոխություն մասնակիցների գրանցամատյանում**
2008-12-29	**Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)** **Մասնակիցների փոփոխություն**
2012-03-12	**Կանոնադրության թվայնացում**
2013-09-30	**Մասնակիցների փոփոխություն** **Մասնակիցների տվյալների փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)** **Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն**
2020-05-25	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**

Քաղվածքը տրամադրող՝ _____ **ՌՈՒԶԱՆՆԱ ՇԻՐԻՆՅԱՆ**
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **2020-05-25**

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2021-01-25

«ԱՐԻԵՍ ՔԵՅԹՐԻՆԳ ՍԵՐՎԻՍ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար	**264.110.06326**
Հիմնադրման տարի	**2003**
Գրանցման ամսաթիվ	**2003-06-16**
Գործունեության ժամկետ	**Անժամկետ**
Կարգավիճակ	**Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	**39080185**
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	**00079228**
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	**45116326**
Էլ. փոստ	-
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	**ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ 43 / ԱՐԱԲԿԻՐ 0033 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**
Հեռախոս	**(10)000000**

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	**Տնօրեն**
Անուն Ազգանուն	**ՀԱՍՄԻԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ՄԻԽԱԻԼԻ**
Անձնագրային տվյալներ	**011956539 2020-08-24 004**
Հասցե	**ՀՐ. ՔՈՉԱՐԻ Փ. / 9 շ. / 4 բն. ԱՐԱԲԿԻՐ 0012 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ **50000**

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով	
ՀԱՍՄԻԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Անձնագիր հ/հ AB0464304 Հասցե՝ ՀՐ.ՔՈՉԱՐԻ / Շ / 9 / 4ԲՆ. ԵՐԵՎԱՆ 0050 ՀԱՅԱՍՏԱՆ	2014-11-24	100 %	50000	

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2003-06-16	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2004-10-21	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2005-03-02	**Սեփականության վկայագրի տրամադրում**
2005-03-03	**Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)** **Մասնակիցների փոփոխություն մասնակիցների գրանցամատյանում** **Մասնակիցների փոփոխություն**
2012-03-14	**Կանոնադրության թվայնացում**
2014-11-21	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2014-11-24	**Տվյալների ուղղում տվյալների շտեմարանում**
2020-03-04	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2021-01-25	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**

Քաղվածքը տրամադրող՝ _____ **Նոնա Գևորգյան**
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **2021-01-25**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆԸ

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՍԵՌԸ

Ի

ԱՆՈՒՆԸ

ՀԱՍՄԻԿ ՄԻԽԱԻԼԻ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԾՆՎԵԼ Է

28.12.1967

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԵԼ Է

25.12.2019

ՎԱՎԵՐԱՑՎԱՆ Է ՄԻՆՉԵՎ

25.12.2029

ՈՒՄ ԿՈՂՄԻՑ

004

ԱՆՁՆԱԳՐԻ ՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ /SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT

TYPE P

COUNTRY CODE ARM

PASSPORT No. AT0344289

SURNAME(S) BARKHUDARYAN

NAME HASMIK

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH 28 DEC 1967

PERSONAL No.

SEX F

PLACE OF BIRTH REPUBLIC OF ARMENIA

DATE OF ISSUE 25 DEC 2019

DATE OF EXPIRY 25 DEC 2029

AUTHORITY 004

P<ARMBARKHUDARYAN<<HASMIK<<<<<<<<<<<<<<<<<<<<

AT0344289 1ARM6712282F2912257<<<<<<<<<<<<<<<06

ՈՒՂՂԱԴԻՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ

THIS PASSPORT IS VALID FOR FOREIGN
COUNTRIES UNTIL:

26.12.2024

ՆՇՈՒՄՆԵՐ OBSERVATIONS

Հաշվառվել է Գ. Երևան 004
Հր. Բդեշխի փ. 19 բն 4
«21» 03 1985 թ.
ստորագրություն

AT 034289